DOI: 10.59560/18291155-2025.3-30

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
Հանրային պաշտպանի գրասենյակի
մոնիթորինգի պատասխանատու,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի դոկտորանտ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածում վերլուծվում է, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին վերապահված գործառույթների և լիազորությունների բնույթը ու ծավալը հիմք են տալիս պնդելու, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման գործում առանցքային դերակատարը հենց Սահմանադրական դատարանն է: Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ Սահմանադրության մեկնաբանման միջոցով հաղթահարվում են Սահմանադրության խախտման հանգեցնող պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտում ի հայտ եկած բացերը: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ պետական իշխանության մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների իրականացման առնչությամբ առաջացող իրավական (սահմանադրական) բնույթ ունեցող վեճերի լուծումը նույնպես Սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունն է: Արված մի շարք առաջարկություններից բացի, հոդվածի հեղինակը նաև կարծիք է արտահայտել առ այն, որ պետական իշխանության մարմինների միջև վեճերի լուծման սահմանադրական մեխանիզմների նախատեսումը բնավ չպետք է դիտարկել պետական իշխանության մարմինների թվաքանակի ավելացման կամ նվազման համատեքստում:

Հիմնաբառեր. ՀՀ Սահմանադրություն, Սահմանադրական դատարան, սահմանադրական արդարադատություն, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունք, օրենսդրական դաշտ, իրավակիրառ պրակտիկա, խորհրդարանական մեծամասնություն, սահմանադրության մեկնաբանում:

Իրավական և ժողովրդավարական հռչակված պետություններում սահմանադրական արդարադատության իրականացումն առանցքային կարևորություն ունի պետությունում ժողովրդավարության ամրապնդման, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության, ինչպես նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից[1]:

Ժամանակակից իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորումը և սահմանադրական արդարադատության իրականացումն անմիջական փոխկապակցված են: Այդ փոխկապակցվածության մասին վկայում է նաև այն հանգամանքը, որ սահմանադրական արդարադատության և իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքին վերաբերող խնդիրները տարբեր կողմերից դարձել են քննարկման առարկա միջազգային մի շարք խորհրդաժողովներում: Մասնավորապես, Ասիայի Սահմանադրական դատարանի դատավորների վեցերորդ կոնֆերանսը նվիրված էր «Սահմանադրական վերանայումը և իշխանությունների տարանջատում» թեմային[2]: Ռիո Դե Ժանեյրոյում կազմակերպված սահմանադրական արդարադատության երկրորդ կոնգրեսը նվիրված էր «Իշխանությունների տարանջատումը, սահմանադրական դատարանների կամ հավասարազոր մարմինների անկախությունը» թեմային: 2014 թվականին Երևանում կազմակերպված միջազգային քսաներորդ խորհրդաժողովը նվիրված էր «Սահմանադրական դատարանների դերը դատական իշխանության անկախության ամրապնդման գործում: Դոկտրինալ մոտեցումները և ժամանակակից մարտահրավերները» թեմային[3]:

---

[1] Հարկ է նշել, որ որոշ պետությունների սահմանադրություններ անմիջականորեն նախատեսել են, որ Սահմանադրական դատարանը պետք է երաշխավորի իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը (**Մոլդովայի** Սահմանադրության 134-րդ հոդված):

[2] Տե՛ս "Constitutional Review and Separation of Powers", Sixth Conference of Asian Constitutional Court judges. Singapore, "Konrad-Adenauer-Stiftung", 2009, էջ 146:

[3] Տե՛ս «Սահմանադրական դատարանի դերը դատական իշխանության անկախության ամրապնդման գործում: Դոկտրինալ մոտեցումները և ժամանակակից մարտահրավերները»: Երևանյան միջազգային 20-րդ խորհրդաժողով, Երևան, «ՆԺԱՐ», 2015 թ., էջ 222:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման գործում սահմանադրական արդարադատության դերակատարությունը բազմիցս ընդգծվել է նաև Վենետիկի հանձնաժողովի եզրակացություններում: Մասնավորապես, 2015 թվականի «Սահմանադրական վերանայումը, գործառույթները և իշխանությունների տարանջատումը» զեկույցում նշվում է, **որ Սահմանադրական դատարանը համարվում է Սահմանադրության գերակայության և իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի երաշխավորը**[1]**,** մեկ այլ զեկույցում Սահմանադրական դատարանի դերակատարությունը կարևորվում է պետական իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռության ապահովման գործում[2], իսկ 2015 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ տրված եզրակացությունում Սահմանադրական դատարանի դերակատարությունը կարևորվել է պետական իշխանության մարմինների միջև առաջացած վեճերի՝ սահմանադրական ճանապարհով լուծման գործում:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման գործում սահմանադրական արդարադատության կարևորությունն ընդգծվել է նաև տեսական գրականությունում: Ս. Սերյոգինան և Ա. Սվիթը սահմանադրական արդարադատության դերակատարությունը կարևորել են խորհրդարանին, հատկապես խորհրդարանական մեծամասնությանը հավասարակշռելու տեսանկյունից: Ս. Սերյոգինան նշում է, որ եթե խորհրդարանի դերակատարության ընդլայնմամբ պետության ղեկավարի դերակատարությունը սահմանափակվեց, ապա սահմանադրական արդարադատության մարմինների ձևավորումը երաշխիք հանդիսացավ «խորհրդարանական բռնակալությունից» խուսափելու համար[3]: Իսկ Ա. Սվիթը նշում է, որ Սահմանադրական դատարանի ակտերը համարվում են «հակակշիռ» խորհրդարանական մեծամասնությանն այն դեպքում, երբ խորհրդարանական մեծամասնությունը բավականին հզոր է, կամ համարվում է օրենսդրին «փոխարինող» այն դեպքում, երբ խորհրդարանում մեծամասնություն գոյություն չունի: Սահմանադրական դատարանը այդ կերպ երբեմն «արգելում» և

[1] Տե՛ս European Commission for Democracy through Law, Constitutional Review Design and Functions influenced the Separation of Powers. Նշված զեկույց, էջեր 12-14:

[2] Տե՛ս European Commission for Democracy through Law, Opinion on the Fourth Amendment to the Fundamental Law of Hungary. Adopted by the Venice Commission at its 95th Plenary Session (Venice, 14-15 June 2013), Opinion 720/2013, CDLAD(2013)012, Strasbourg, 17 June 2013, paragraph 144.1:

[3] Տե՛ս **Серегина С.Г.** Конституционный контроль в аспекте формы правления // Международная научно-практическая конференция, էջեր 28-30:

«կանխում է» խորհրդարանի որոշումները, որի արդյունքում ուղենշում է պետությունում օրենսդրության զարգացման ուղղությունները[1]:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման և սահմանադրական արդարադատության միջև կապը քննարկվել է նաև այլ հեղինակների կողմից: Վ. Զորկինը նշում է, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի կենսագործումը ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքական բարդ հիմնախնդիր է, որը կախված է պետական իշխանության մարմիններին վերապահված լիազորությունները իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հիման վրա իրականացնելու, պետական իշխանության ճյուղերի միջև հակամարտությունների և վեճերի առաջացումը չթույլատրելու, իսկ դրանց առաջացման դեպքում՝ սահմանադրական արդարադատության միջոցով լուծելու հնարավորությամբ[2]: Լ. Մամուտը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման գործում սահմանադրական արդարադատության դերակատարությունը կարևորում է այն առումով, որ նշված սկզբունքը վերացական է, որի արդյունքում պետական իշխանության ճյուղերի միջև կարող են առաջանալ վեճեր, որոնց լուծման գործում առանցքային դեր ունեն բարձրագույն սահմանադրական ատյանները, որոնք մեկնաբանում են սահմանադրական դրույթները[3]:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման և սահմանադրական արդարադատության միջև կապին անդրադարձել են Ս. Սայդիկովան, Մ. Մահֆուդը և Ե. Բուրդինան: Ս. Սայդիկովան նշում է, որ Սահմանադրական դատարանը հատուկ դեր է խաղում իշխանությունների տարանջատման սկզբունքի ապահովման գործում, որը միտված է պետությունում ապահովելու քաղաքական կայունություն[4]: Իսկ Մ. Մահֆուդը նշում է, որ Սահմանադրական դատարանը պետք է ապահովի իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքը, այդ կերպ երաշ-

[1] Տե՛ս **Sweet A.S.** “The politics of constitutional review in France and in Europe”, New York, “Oxford University Press”, International Journal of Constitutional Law, Volume 5, Issue 1, 2007, էջեր 85-87:

[2] Տե՛ս **Зорькин В.Д.** Принцип разделения властей в деятельности Конституционного Суда Российской Федерации // Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии “Конституционное правосудие”, Вып. 2(40)-3(41)2008, էջեր 46-48:

[3] Տե՛ս **Мамут Л.С.** Публичная власть, государство и разделение властей. Конституционный Суд как гарант разделения властей // Сборник докладов. Институт права и публичной политики. - Москва, 2004, էջ 262:

[4] Տե՛ս **Sydykova S.** **“**The Constitutional Court of Kyrgyzstan”**.** Constitutional review and separation of powers. Sixth Conference of Asian Constitutional Court Judges, Singapore, **“**Konrad-Adenauer-Stiftung”, 2009, էջ 47:

խավորելով պետական ինստիտուտների գործառույթների և լիազորությունների իրականացումը[1]: Ե.Բուրդինան նշում է, որ Սահմանադրական դատարանը, մի կողմից, պետք է հանդես գա որպես պետական իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռության երաշխավոր, իսկ մյուս կողմից՝ որպես հաշտեցնող[2]:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք նշել, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման գործում Սահմանադրական դատարանն ունի հատուկ դեր, որը պայմանավորված է Սահմանադրական դատարանի գործառույթների շրջանակով և դրանց իրացման արդյունքում ընդունած ակտերի բնույթով[3]: Այդ համատեքստում առանձնացնում ենք հետևյալ հիմնադրույթները՝

ա) ժամանակակից իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման գործում առանցքային դերակատարություն ունի դատական սահմանադրական վերահսկողության իրականացումը.

բ) իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը ժամանակի ընթացքում զարգանում է՝ ձեռք բերելով նոր բնութագրիչներ և ընկալումներ, որի ընթացքում առաջանում է դրանց վերաբերող սահմանադրական

[1] Տե՛ս **Moh. Mahfud MD.** Separation of Powers and Independance of Constitutional Court in Indonesia. 2nd Congress of the World Conference on Constitutional Justice. Rio de Janeiro, Brazil on 16-18 January, 2011, էջեր 16-17:

[2] Տե՛ս **Бурдина Е.В.** Судебная власть в Российской Федерации: Учебник. – Саранск: Мордовское книжное издательство, 2006, էջ 47:

[3] Սահմանադրական դատարանի ընդունած իրավական ակտերը, իրենց բնույթով պայմանավորված, «առանձնահատուկ» են: Նշված հանգամանքը ամրագրված է նաև Սահմանադրական դատարանի 2011 թ. ՍԴՈ-943 որոշման շրջանակներում արտահայտված դիրքորոշումներում: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը նշել է հետևյալը. **ա**) Սահմանադրական արդարադատություն իրականացնելը և այդ գործառույթի շրջանակներում գործով որոշում կայացնելը Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է, **բ)** քննելով սահմանադրական գործեր՝ Սահմանադրական դատարանը կայացնում է որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման դատական համակարգի մյուս մարմինների կողմից, **գ)** իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը գնահատում է նաև արտադատական պրակտիկան՝ բացահայտելով նաև կիրառվող օրենքների սահմանադրա-իրավական բովանդակությունը, զարգացնելով ինչպես սահմանադրական, այնպես էլ ճյուղային իրավունքը, **դ)** իրավական ակտերի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշմանը հաջորդում են իրավական հետևանքներ, որոնք պարտադիր հանգեցնում են օրենքով սահմանված կարգով դատական ակտերի վերանայման, **ե)** Սահմանադրական դատարանն իր որոշումներով, ըստ էության, մեկնաբանում է Սահմանադրությունը, **զ)** Սահմանադրական դատարանի որոշումները վիճարկման ենթակա չեն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային որևէ դատարանում: Այս մասին տե՛ս **Сергевнин С.Л.** Конституционное правовое истолкование как особый вид юридической герменевтики. Конституционное правосудие. – Ереван, 2013, էջեր 55-56:

դրույթների մեկնաբանման անհրաժեշտություն, որի իրականացման բացառիկ լիազորությունը վերապահված է Սահմանադրական դատարանին.

գ) պետական իշխանության մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների իրականացման ընթացքում առաջացող իրավական և քաղաքական բնույթ ունեցող վեճերի լուծման լիազորությունը նույնպես վերապահված է Սահմանադրական դատարանին:

Սահմանադրական դատարաններին վերապահված բոլոր լիազորություններն էլ որոշ չափով առնչվում են իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորմանը, սակայն անմիջականորեն առնչվում են Սահմանադրության մեկնաբանման և պետական իշխանության մարմինների միջև առաջացած վեճերի լուծման լիազորություններին:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի **Սահմանադրության մեկնաբանման լիազորությունը:** Սահմանադրության մեկնաբանումը կոչված է բացահայտելու սահմանադրական նորմերի բովանդակությունը և ապահովելու դրանց միատեսակ ընկալումները և կիրառումը իրավակիրառ պրակտիկայում: Սահմանադրության մեկնաբանման և իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման միջև կապը պայմանավորված է հետևյալով՝

ա) իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը ժամանակի ընթացքում զարգանում և վերափոխվում է, ձեռք է բերում նոր բնութագրիչներ և ընկալումներ, որոնք լրացուցիչ մեկնաբանման և բացահայտման անհրաժեշտություն ունեն.

բ) Սահմանադրությունում առկա օրենսդրական բացերը խոչընդոտում են իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի արդյունավետ կիրառմանը, որոնք երբեմն հաղթահարվում են Սահմանադրության մեկնաբանման միջոցով:

Այս առումով հարկ է նշել, որ Սահմանադրության մեկնաբանման լիազորության՝ որպես Սահմանադրական դատարանի առանձին լիազորության, սահմանադրական ամրագրման հետ կապված պետությունների սահմանադրություններում միասնական մոտեցումներ չկան: Որոշ պետություններում Սահմանադրական դատարանի հիշյալ լիազորությունը սահմանադրական ամրագրում է ստացել[1], մինչդեռ մյուսներում, այդ թվում՝ **Հայաստանի**

[1] **Մոլդովայի** Սահմանադրության 135-րդ հոդված, **Ուկրաինայի** Սահմանադրության 147-րդ հոդված, **Անգոլայի** Սահմանադրության 95-րդ հոդված, **Ռուսաստանի** Սահմանադրության 125-րդ հոդված:

Հանրապետությունում, Սահմանադրությունն այն անմիջականորեն չի ամրագրել: Այդուհանդերձ, անկախ այն հանգամանքից՝ Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին Սահմանադրության մեկնաբանման լիազորություն վերապահվել է, թե ոչ, բոլոր դեպքերում, գտնում ենք, որ Սահմանադրական դատարանը մեկնաբանում է Սահմանադրությունը, քանի որ առանց դրա իր գործառույթները պարզապես չի կարող իրականացնել: Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության մեկնաբանման լիազորության վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը: Մասնավորապես, **2006** թվականի **ՍԴՈ-652 որոշման մեջ** նշվում է, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների բովանդակությունը Սահմանադրական նորմերի պաշտոնական մեկնաբանություն են: **Ընդ որում՝ Սահմանադրության մեկնաբանումը Սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունն է**[1]**:**

Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանմանը վերաբերող հարցերը քննարկվել են նաև տեսական գրականությունում: Այսպես՝ Է. Կուրիսը նշում է, որ Սահմանադրությունը մեկնաբանող դատարանն իրականացնում է սահմանադիր իշխանությունը[2]: Որոշ հեղինակներ՝ Վ. Զորկինը, Վ. Գրիգորևը, Սահմանադրության մեկնաբանումը դիտարկում են սահմանադրական նորմերի զարգացման տեսության տեսանկյունից: Այսպես՝ Վ. Զորկինը նշում է, որ Սահմանադրական դատարանը սահմանադրությունը մեկնաբանում է ժամանակի ոգուն համապատասխան, որի արդյունքում հանդես է գալիս որպես Սահմանադրության պահապան[3]: Վ. Գրիգորևը Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական նորմերի մեկնաբանման կարևորությունը պայմանավորում է հետևյալ գործոններով՝ Սահմանադրությունում փոփոխում կամ լրացում կատարելը բարդ գործընթաց է, որից խուսափելու համար անհրաժեշտ է սահմանադրության նորմերը մեկնաբանման միջոցով զարգացնել, բացի այդ, երբեմն Սահմանադրության դրույթներում առաջանում

[1] Այդ հանգամանքը ընդգծել է նաև Վենետիկի հանձնաժողովը: Ղազախստանի Սահմանադրության նախագծով սահմանադրության մեկնաբանման լիազորություն էր վերապահվել խորհրդարանին, որի կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովն իր մտահոգությունն է հայտնել և նշել է, որ Սահմանադրության մեկնաբանման լիազորությունը պետք է վերապահվի բացառապես Սահմանադրական դատարանին: Տե՛ս European Commission for Democracy through Law, “Opinion on the Draft Amendments to the Constitution of Kyrgyzstan”: Նշված զեկույց, կետեր 28-29.

[2] Տե՛ս **Курис Э.** О Стабильности конституции, источниках права и мнимом всемогуществе конституционных судов. – Москва: “Институт права и публичной политики”, 2004. - С. 94:

[3] Տե՛ս **Зорькин В.Д.** Прецедентный характер решений Конституционного Суда Российской Федерации. - Москва, 2004, էջեր 3-9:

են հակասություններ, որոնք նույնպես պետք է հաղթահարվեն մեկնաբանման միջոցով[1]:

Սահմանադրության մեկնաբանման կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Սահմանադրության մեկնաբանման միջոցով հաղթահարվում են իրավական բացերը և անորոշությունները, որոնք իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում են տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, ինչն էլ հանգեցնում է Սահմանադրության խախտման, ընդ որում՝ սահմանադրական մակարդակում առկա բացերը և անճշտությունները հաղթահարվում են Սահմանադրության լույսի ներքո Սահմանադրական դատարանի կողմից[2]:

Այսպիսով՝ ամփոփելով նշենք, որ Սահմանադրության մեկնաբանումը Սահմանադրական դատարանի բացառիկ գործունեության տեսակ է, որն **առաջին՝** իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի զարգացման համատեքստում, ժամանակակից ընկալումներին համապատասխան, միտված է բացահայտելու Սահմանադրության նորմի բովանդակությունը, այդ թվում՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին վերաբերող, **երկրորդ՝** Սահմանադրության մեկնաբանման միջոցով հաղթահարվում են իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի կիրառմանը խոչընդոտող Սահմանադրությունում առկա օրենսդրական բացերը և անորոշությունները, որոնք իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում են տվյալ նորմի այնպիսի մեկնաբանության ու կիրառման, որը հանգեցնում է Սահմանադրության նորմերի խախտման:

Մյուս կողմից, Սահմանադրական դատարանը պետական իշխանության մարմինների զսպումների և հավասարակշռման համակարգում ունի առանձնահատուկ կարգավիճակ: Դա պայմանավորված է Սահմանադրական դատարանի գործառույթներով և ընդունած ակտերի իրավաբանական բնույթով: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու միջոցով վերահսկողություն է իրականացնում օրենսդրական գործունեության սահմանադրականության նկատմամբ, որի արդյունքում կարող է անվավեր ճանաչել Սահմանադրությանը հակասող և սահմանադրական վերահսկողության առարկա հանդիսացող իրավական

[1] Տե՛ս **Григорьев В.А.** Текстуально-правовые конфликты в конституциях и проблемы их преоделения. - Москва, 2006, էջ 45:

[2] Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Հարությունյան Գ.Գ.**, Օրենսդրական բացերի հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտիկայում: Զեկույց սահմանադրական դատարանների եվրոպական կոնֆերանսի XIV վեհաժողովում, Վիլնյուս, 2008 թ.:

ակտերը: Սահմանադրական դատարանը, իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելիս, ինչպես նշեցինք, մեկնաբանում է Սահմանադրությունը: Ընդ որում, Սահմանադրության մեկնաբանման արդյունքում Սահմանադրական դատարանի ընդունած որոշումները վերջնական են, բողոքարկման ենթակա չեն, չեն սահմանափակվում միայն դատավարության կողմերի համար ունեցած իրավական հետևանքներով, այլ ունեն **erga omnes** բնույթ:

Սահմանադրության մեկնաբանման արդյունքում Սահմանադրական դատարանի գործունեությունն իր բնույթով մոտ է նորմաստեղծ գործունեությանը, քանի որ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները դառնում են իրավունքի առանցքային աղբյուր և որոշ դեպքերում ուղենշում են օրենսդրական քաղաքականության հիմնական ուղղությունները: Սահմանադրական դատարանի նշված կարգավիճակով հանդերձ, գտնում ենք, որ առկա են որոշակի սահմանադրական երաշխիքներ Սահմանադրական դատարանին այսպես կոչված օրենսդիր գործառույթ իրականացնելու «գայթակղությունից» զերծ պահելու և պետական իշխանության մարմինների համակարգում այդ առումով զսպելու և հավասարակշռելու համար: Դա, նախևառաջ, պայմանավորված է այն հանգամանքով, որ Սահմանադրական դատարանը բոլոր դեպքերում ենթարկվում է Սահմանադրությանը և կաշկանդված է Սահմանադրական նորմերով: Չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրական դատարանը մեկնաբանում է Սահմանադրությունը, ինչը որոշակի հայեցողություն է ենթադրում, սակայն պետք է նշենք, որ Սահմանադրական դատարանը բոլոր դեպքերում Սահմանադրությունը մեկնաբանում է՝ առաջնորդվելով որոշակի չափանիշներով, դրանք հիմնարար սահմանադրական սկզբունքներն են: Սահմանադրական դատարանի պրակտիկայի վերլուծությունից բխում է, որ Սահմանադրական դատարանն առավել հաճախ հղում է անում հետևյալ հիմնարար սահմանադրական սկզբունքներին՝ իրավական որոշակիության և համաչափության սկզբունք, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունք, իրավունքի գերակայության սկզբունք և այլն: Այսինքն, բոլոր դեպքերում, Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության մեկնաբանման գործառույթը կաշկանդված է Սահմանադրությամբ և սահմանադրությունում արտացոլված հիմնարար սահմանադրական սկզբունքներով:

Բացի այդ, Սահմանադրական դատարանի մասով որպես «զսպող» մեխանիզմ կարելի է դիտարկել նաև այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանը իր նախաձեռնությամբ չի կարող գործ քննել կամ դուրս գալ

քննարկման առարկա հարցի շրջանակից: Սահմանադրական դատարանը գործ կարող է քննել միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում: Բացի այդ, Սահմանադրական դատարանը գործ քննելիս չի կարող դուրս գալ քննության առարկա հարցի շրջանակից, օրինակ սահմանադրական վերահսկողության առարկա իրավական ակտերի սահմանադրականության որոշման գործերով Սահմանադրական դատարանը լիազորված է որոշելու միայն վիճարկվող ակտի համապատասխանությունը սահմանադրությանը: Ուստի, Սահմանադրական դատարանի, այսպես կոչված «նորմաստեղծ գործունեությունը» սահմանափակված է սահմանադրական վերահսկողության առարկա իրավական ակտերի Սահմանադրությանը համապատասխանության որոշման վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումներով:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից առանցքային է Սահմանադրական դատարանի՝ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների իրականացման առնչությամբ առաջացած վեճերի լուծման լիազորությունը:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին լիազորություն վերապահվեց լուծելու սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերը: Նկատենք, որ չնայած այն հանգամանքին, որ 1995 թվականի և 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի լուծման լիազորություն վերապահված չէր, այդուհանդերձ, Սահմանադրական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Սահմանադրական դատարանն այլ լիազորությունների միջոցով մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներում անդրադարձել է այնպիսի հարցերի, որոնք առնչվել են, երբեմն նաև անմիջականորեն, պետական իշխանության մարմինների միջև առաջացած տարաբնույթ վեճերին և պետական իշխանության մարմինների ինստիտուցիոնալ համակարգի և գործառույթների շրջանակի հստակեցման խնդիրներին: Օրինակ, 2007 թվականի հունվարի 6-ի ՍԴՈ-673 որոշմամբ Սահմանադրական դատարանն անդրադարձել է իշխանությունների բաժանման և հավասարակշռման ինստիտուցիոնալ համակարգին, այն է՝ պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգից դուրս անկախ մարմինների գոյության հիմնավորվածության հարցին: 2012 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1063 որոշմամբ

Սահմանադրական դատարանն անդրադառնում է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ և գործառութային բաժանման փոխառնչակցությանը:

Սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է պետական իշխանության մարմինների գործառույթների և լիազորությունների հստակ տարանջատման խնդրին: Օրինակ՝ 2015 թվականի նոյեմբերի 17-ի ՍԴՈ-1236 որոշմամբ անդրադարձել է մինչդատական վարույթում հետաքննության և նախաքննության մարմինների լիազորությունների շրջանակին վերաբերող հարցերին: 2008 թվականի ՍԴՈ-766 որոշմամբ անդրադառնում է **ՀՀ վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի լիազորությունների տարանջատման խնդրին**, մեկ այլ՝ 2006 թվականի ՍԴՈ-655 որոշմամբ՝ ընդհանուր իրավասության դատարանների և Սահմանադրական դատարանի լիազորությունների տարանջատման խնդրին, իսկ 2008 թվականի ՍԴՈ-780 որոշմամբ՝ Սահմանադրական դատարանի և վարչական դատարանի լիազորությունների տարանջատման խնդրին: Բացի այդ, Սահմանադրական դատարանը մի շարք որոշումներով անդրադարձել է օրենսդրական բացերի հաղթահարման գործում պետական իշխանության մարմինների լիազորությունների տարանջատման խնդրին (ՍԴՈ-864, ՍԴՈ-1143, ՍԴՈ-864, ՍԴՈ-914 և ՍԴՈ-933 որոշումներ):

Ինչպես նշեցինք, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին լիազորություն վերապահվեց լուծելու սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերը: Մինչև նշված սահմանադրական լիազորության բուն էությանը անդրադառնալը՝ ցանկանում ենք քննարկման առարկա դարձնել 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների հայեցակարգում ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ պետական իշխանության մարմինների միջև վեճերի լուծման իրավակարգավորումների նախատեսումը կարևորվել է նրանով, որ սահմանադրական մարմինների քանակն ավելացել է, որից բխում է, որ պետական իշխանության մարմինների միջև առավել հավանական է տարաբնույթ սահմանադրական վեճերի առաջացումը[1]: Ինչպես տեսնում ենք, Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով Սահմանադրական դատարանին սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների առնչությամբ առաջացող սահմանադրական վեճերի լուծման լիազորության վերապահումը հիմնավորվել է այն հանգա-

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: 2014, էջ 42:

մանքով, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքում սահմանադրական մարմինների թվաքանակն ավելացել է: **Այդ մոտեցման հետ համակարծիք չենք հետևյալ հիմնավորմամբ՝**

ա) սահմանադրական փոփոխությունների արդյունքում սահմանադրական մարմինների քանակը իրապես չի ավելացել՝ բացառությամբ քննչական մարմինների սահմանադրական կարգավիճակի տրամադրման և Սահմանադրության 122-րդ հոդվածով նախատեսված դեպքի.

բ) պետական իշխանության մարմինների միջև վեճերի լուծման սահմանադրական մեխանիզմների նախատեսումը բնավ չպետք է դիտարկել պետական իշխանության մարմինների թվաքանակի ավելացման և նվազման համատեքստում, քանի որ անկախ սահմանադրական մարմինների քանակից, պետական իշխանության մարմինների միջև առաջանում են վեճեր, որոնք ժողովրդավարական և իրավական հռչակված պետություններում պետք է լուծվեն բացառապես արտադատական ճանապարհով:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 168–րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանին լիազորություն է վերապահվել լուծելու սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը: Նշված սահմանադրական հոդվածի վերլուծությունից բխում է հետևյալը՝

ա) սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների իրականացմանը վերաբերող վեճերի լուծումը Սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունն է, քանի որ պետական իշխանության որևէ այլ մարմին այդպիսի սահմանադրական լիազորություն չունի.

բ) վեճի կողմ կարող են հանդես գալ սահմանադրական կարգավիճակ ունեցող՝ Սահմանադրությամբ նախատեսված պետական իշխանության մարմինները.

գ) վեճի օբյեկտ են հանդիսանում սահմանադրական մարմինների կողմից սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի հետ կապված հարաբերությունները:

Սահմանադրական դատարանի՝ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման լիազորության հետ կապված միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ պետությունների սահմանադրությունները **միասնական մոտեցում չեն ամրագրել** վեճի սուբյեկտների շրջանակի բնորոշման հարցում: Մասնավորապես, որոշ պետություններում, որպես սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջա-

ցած վեճի կողմ նախատեսվել են հանրային իշխանության մարմինները, մի շարք այլ պետություններում՝ կենտրոնական պետական իշխանության մարմինները, իսկ որոշ դեպքերում՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերը:

Այսպես, **Բելգիայի** Սահմանադրության 202-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանը լուծում է հանրային իշխանության մարմինների միջև առաջացած վեճերը: **Լեհաստանի** Սահմանադրության 189-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական տրիբունալը լուծում է կենտրոնական պետական իշխանության մարմինների միջև առաջացած վեճերը: **Խորվաթիայի** Սահմանադրության 129-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանը լուծում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերի միջև առաջացած վեճերը: **Վրաստանի** Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանը լուծում է պետական մարմինների միջև լիազորությունների հետ կապված վեճերը: **Մակեդոնիայի** Սահմանադրության 110-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանը որոշում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանություն իրականացնող մարմինների իրավազորությունների հետ կապված վեճերը և այլն:

Սահմանադրական մարմինների միջև առաջացած վեճերի արդյունավետ լուծման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նշված հարցերով Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակը: Սահմանադրության 169-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարան դիմելու լիազորություն ունեն՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Հանրապետության նախագահը, կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը և տեղական ինքնակառավարման մարմինները:

Նշենք, որ միջազգային փորձից բխում է, որ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերով Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակի վերաբերյալ մոտեցումները տարբեր են:

Այսպես, **Լեհաստանի** Սահմանադրության 192-րդ հոդվածով սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճերով Սահմանադրական դատարան դիմելու լիազորություն ունեն Հանրապետության նախագահը, խորհրդարանի երկու պալատները, վարչապետը, Գերագույն դատարանի նախագահը, վերաքննիչ պալատի նախագահը: **Ռումինիայի** Սահմանադրության 146-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական լիազորությունների

հետ կապված վեճերով Սահմանադրական դատարան կարող են դիմել Հանրապետության նախագահը, խորհրդարանի երկու պալատների նախագահներից մեկը, վարչապետը, մագիստրատուրայի գերագույն խորհրդի նախագահը: **Ալբանիայի** «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 54-րդ հոդվածի համաձայն՝ վեճերով Սահմանադրական դատարան իրավասու են դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ովքեր համարվում են վեճի կողմ կամ առնչվում են վեճի հետ: **Չեխիայի** «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 120-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմինների միջև վեճերի առաջացման դեպքում դիմող կողմ են համարվում պետական մարմինները: **Խորվաթիայի** «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 81-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների մարմինների միջև լիազորությունների վերաբերյալ վեճերի առաջացման դեպքում նշված մարմիններից յուրաքանչյուրը կարող է դիմել Սահմանադրական դատարան: **Չիլիի** Սահմանադրության 93-րդ հոդվածի համաձայն՝ վեճերի մասով Սահմանադրական տրիբունալ կարող են դիմել վեճի կողմերը կամ դատարանները:

Դրանով հանդերձ, բոլոր դեպքերում, գտնում ենք, որ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերով Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակի որոշումը պետք է բավարար չափով հիմնավորված լինի:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության վերլուծությունից բխում է, որ չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ մասում նշվում է սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճերի լուծման գործառույթի մասին, այդուհանդերձ, Սահմանադրությամբ սահմանադրական կարգավիճակ ունեցող բոլոր մարմիններին չէ, որ վերապահվել է սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերով Սահմանադրական դատարան դիմելու լիազորություն: Նշված հիմքով Սահմանադրական դատարան դիմելու լիազորություն չունեն մի շարք սահմանադրական մարմիններ՝ դատախազությունը, կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հաշվեքննիչ պալատը, կենտրոնական բանկը, հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, Մարդու իրավունքների պաշտպանը: **Այդպիսի մոտեցումը գտնում ենք, որ վիճարկելի է և չի նպաստում սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի սահմանադրական արդարադատության միջոցով լուծմանը, քանի որ նշված սահմանադրական մարմինները,**

օժտված լինելով սահմանադրական լիազորություններով, կարող են դառնալ սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի կողմ: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության սահմանադրական պրակտիկայի վերլուծությունից ևս բխում է, որ մինչև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության ընդունումը Սահմանադրական դատարանը մի շարք գործերով քննել է այնպիսի գործեր, որոնք վերաբերել են պետական իշխանության գործառույթների և լիազորությունների տարանջատման խնդիրներին: Եվ այդ գործերով Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ են եղել այնպիսի մարմիններ, որոնք 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճի գործերով Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ չեն նախատեսվել: Օրինակ, 2015 թվականի նոյեմբերի 17-ի ՍԴՈ-1236 որոշմամբ՝ Սահմանադրական դատարանն անդրադառնում է մինչդատական վարույթում հետաքննության և նախաքննության մարմինների լիազորությունների շրջանակին վերաբերող հարցերին: Նշված գործով դիմող կողմ Մարդու իրավունքների պաշտպանը նշում է, որ գլխավոր դատախազի, հսկող դատախազի և քննիչի կողմից քրեական գործ հարուցելու, քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու լիազորության տարանջատման հետ կապված «առկա են խնդիրներ»:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ **առաջարկում ենք ընդլայնել** ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ մասով Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակը՝ այդպիսի սահմանադրական լիազորություն վերապահելով նաև անկախ սահմանադրական մարմիններին (դատախազությանը, կենտրոնական ընտրական հանձնաժողովին, հաշվեքննիչ պալատին, կենտրոնական բանկին, հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին, Մարդու իրավունքների պաշտպանին):

Այսպիսով՝ վերը նշվածից բխում է, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման գործում Սահմանադրական դատարանը, պետական իշխանության մարմինների համակարգում իրականացվող գործառույթների և լիազորությունների ծավալով պայմանավորված, առանցքային կարևորություն ունի: Նշված գործառույթների արդյունավետ իրականացման համար Սահմանադրական դատարանը՝

ա) պետական իշխանության մարմինների համակարգում պետք է ունենա այնպիսի ինստիտուցիոնալ կարգավիճակ, որը չի խոչընդոտի վերջինիս գործառույթների պատշաճ իրականացմանը.

բ) պետք է ունենա գործառութային անկախության բավարար երաշխավորվածություն.

գ) պետք է առկա լինի սահմանադրական վերահսկողության օբյեկտների և Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ամբողջական և հիմնավորված շրջանակ:

Պետական իշխանության մարմինների համակարգում Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ տեղի վերաբերյալ տեսական գրականությունում միասնական մոտեցումներ չկան: Որոշ հեղինակներ՝ Վ. Չիրկինը, Ջ. Օմեյեսը, Յու. Շուլժենկոն Սահմանադրական դատարանը դիտարկում են որպես պետական իշխանության առանձին ճյուղ: Վ. Չիրկինն այն համարում է իշխանության առանձին ճյուղ, որն իրականացնում է սահմանադրական-վերահսկողական գործառույթները[1]: Ջ. Օմեյեսը Սահմանադրական դատարանը համարում է պետական իշխանության առանձին ճյուղ, որը հսկողություն է իրականացնում իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ[2], իսկ Յու. Շուլժենկոն նշում է, որ Սահմանադրական դատարանը հանդես է գալիս որպես հատուկ հսկող իշխանություն, որի հիմնական գործառույթն է իրականացնել սահմանադրական հսկողություն[3]:

Ի հակադրություն նշված տեսակետների՝ որոշ հեղինակների կողմից քննադատվել են Սահմանադրական դատարանի՝ որպես իշխանության առանձին ճյուղի վերաբերյալ գաղափարները: Բ. Ղազինյանը նշում է, որ սահմանադրական-վերահսկողական ճյուղի ստեղծումը կկրի արհեստական բնույթ, քանի որ պետական իշխանության յուրաքանչյուր ճյուղ, ինքնին օժտված լինելով որոշակի հսկողական և վերահսկողական բնույթի լիազորություններով, օժտված է մյուս իշխանությունների ոչ իրավաչափ գործողություններին հակազդելու հնարավորությամբ[4]:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 163-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ Սահմանադրական դատարանը համարվում է պետական իշխանության համակարգի մաս: Սահմանադրական դատարանի այդպիսի կարգավիճակի պարագայում հարց է առաջանում, թե

[1] Տե՛ս **Чиркин В.Е.** Государствоведение: Учебник. - Москва, “Юрист”, 1999, էջեր 258-260:

[2] Տե՛ս **Omejes J.** Conference of constitutional control bodies of Central Asia, “The Role of the Constitutional Court in Safeguarding the Supremacy of the Constitution”. Strasbourg, 28-29 October 2015, էջ 10:

[3] Տե՛ս **Шульженко Ю.** Конституционный контроль в России. - Москва, 1995, էջեր 16-17:

[4] Տե՛ս **Ղազինյան Բ.,** Իշխանությունների տարանջատումը որպես իրավական պետության հիմնարար սահմանադրական սկզբունք: Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ հրատարակչություն, «21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդես, թիվ 3(43), 2012 թ., էջեր 75-76:

այն, գտնվելով դատական իշխանության համակարգում, կարո՞ղ է արդյոք իրականացնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման գործում իրեն վերապահված լիազորությունները, հատկապես լուծել սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների իրականացման առնչությամբ առաջացած վեճերը: Այս կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովը 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ տրված նախնական կարծիքում նշում է, որ հաշվի առնելով սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման Սահմանադրական դատարանի լիազորությունը՝ **անհրաժեշտ է Սահմանադրական դատարանն առանձնացնել այլ դատարաններից, քանի որ այն չի կարող լինել վեճի կողմ որպես դատական իշխանության բաղկացուցիչ մաս, հետևաբար անհրաժեշտ է նախատեսել Սահմանադրական դատարանին նվիրված առանձին բաժին կամ գլուխ, որը կհստակեցնի Սահմանադրական դատարանի հատուկ բնույթը**[1]: Սակայն այդ հարցի հետ կապված Սահմանադիրն այլ մոտեցում որդեգրեց: **Գտնում ենք, որ Սահմանադրական դատարանը, համարվելով սահմանադրական արդարադատություն իրականացնող դատական ատյան, տրամաբանական և հիմնավորված է, որ գտնվի դատական իշխանության համակարգում, սակայն, գտնվելով դատական իշխանության համակարգում՝ պետք է ունենա գործառութային անկախություն և գործունեության բավարար երաշխիքներ:**

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից առանցքային կարևորություն ունի Սահմանադրական դատարանի անկախության երաշխավորումը: 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 167-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը արդարադատություն իրականացնելիս անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանի անկախության երաշխավորման տեսանկյունից հատկապես կարևորվում է հնարավոր քաղաքական ազդեցություններից Սահմանադրական դատարանի գործառութային անկախության ապահովումը: Քաղաքական ազդեցություններից Սահմանադրական դատարանի գործառութային անկախության ապահովումը բավականին բարդ է. դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Սահմանադրական դատարանի գործունեությունում իրավունքը և քաղաքա-

[1] Տե՛ս European Commission for Democracy through Law, “Preliminary Opinion on the Draft Amendments to Chapters 1 to 7 and 10 of the Constitution of the Republic of Armenia”: Նշված զեկույցի 146-147 կետեր:

կանությունը որոշ չափով «խաչաձևում» են, ինչն անուղղակիորեն կարող է ազդեցություն ունենալ Սահմանադրական դատարանի անկախության երաշխավորվածության վրա: Սահմանադրական դատարանի գործունեությունում իրավունքի և քաղաքականության «խաչաձևումը» դրսևորվում է հետևյալ կերպ. Սահմանադրական դատարանը՝

ա) լայն առումով կազմավորվում է քաղաքական ինստիտուտների կողմից[1].

բ) իր գործառույթների շրջանակներում լուծում է նաև քաղաքական գործոնների ներազդեցության արդյունքում առաջացած իրավական վեճեր, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն քաղաքական տարրեր են պարունակում.

գ Սահմանադրական դատարանի ընդունած որոշումները որոշ դեպքերում ունեն քաղաքական բնույթի հետևանքներ՝ կուսակցական գործունեության դադարեցում, նոր ընտրությունների նշանակում:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին վերապահված գործառույթների և լիազորությունների բնույթը և ծավալը հիմք են պնդելու, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման գործում առանցքային դերակատարը Սահմանադրական դատարանն է, ինչը պայմանավորված է հետևյալով.

ա) Սահմանադրության մեկնաբանման միջոցով հաղթահարվում են Սահմանադրության խախտման հանգեցնող պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտում ի հայտ եկած բացեր, բացի այդ՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին վերաբերող սահմանադրական դրույթները, ժամանակի ընթացքում նոր ընկալումների հիման վրա զարգանալով, ձեռք են բերում մեկնաբանման անհրաժեշտություն, որոնց իրականացումը Սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունն է:

բ) պետական իշխանության մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների իրականացման առնչությամբ առաջանում են իրավական

[1] Միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ սահմանադրական դատարանները հիմնականում ձևավորվում են քաղաքական մարմինների կողմից: Որոշ պետություններում սահմանադրական դատարանը ձևավորում են Հանրապետության նախագահը և խորհրդարանը (**Ալբանիա, Ռումինիա**), մյուսներում՝ միայն խորհրդարանը (**Հունգարիա, Սլովակիա**): Կան նաև պետություններ, որտեղ սահմանադրական դատարանների ձևավորմանը, Հանրապետության նախագահից և խորհրդարանից բացի, մասնակցում է նաև դատական իշխանությունը (**Իտալիա, Թուրքիա**): Բավականին հետաքրքիր են **Սերբիայի** Սահմանադրական դատարանի ձևավորման մեխանիզմները:

(սահմանադրական) բնույթ ունեցող վեճեր, որոնց լուծումը նույնպես Սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունն է:

Միևնույն ժամանակ, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի լուծման լիազորության հիմքով Սահմանադրական դատարան դիմելու լիազորություն ունեցող սուբյեկտների շրջանակը սահմանափակ է, որի արդյունքում որոշ սահմանադրական մարմինների լիազորություն չի վերապահվել սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման հիմքով դիմել Սահմանադրական դատարան:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սահմանադրական դատարանի դերը դատական իշխանության անկախության ամրապնդման գործում: Դոկտրինալ մոտեցումները և ժամանակակից մարտահրավերները: Երևանյան միջազգային 20-րդ խորհրդաժողով: Երևան, «ՆԺԱՐ», 2015 թ.:

2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2014 թ.:

3. “Constitutional Review and Separation of Powers”, Sixth Conference of Asian Constitutional Court judges. Singapore, “Konrad-Adenauer-Stiftung”, 2009.

4. European Commission for Democracy through Law, Constitutional Review Design and Functions influenced the Separation of Powers.

5. European Commission for Democracy through Law. Opinion on the Fourth Amendment to the Fundamental Law of Hungary. Adopted by the Venice Commission at its 95th Plenary Session (Venice, 14-15 June, 2013), Opinion 720/2013, CDLAD(2013)012, Strasbourg, 17 June 2013.

6. European Commission for Democracy through Law, “Preliminary Opinion on the Draft Amendments to Chapters 1 to 7 and 10 of the Constitution of the Republic of Armenia”.

7. European Commission for Democracy through Law, “Opinion on the Draft Amendments to the Constitution of Kyrgyzstan”.

8. Հարությունյան Գ.Գ., Օրենսդրական բացերի հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտի-

կայում: Զեկույց սահմանադրական դատարանների եվրոպական կոնֆերանսի XIV վեհաժողովում, Վիլնյուս, 2008 թ.:

9. Ղազինյան Բ., Իշխանությունների տարանջատումը որպես իրավական պետության հիմնարար սահմանադրական սկզբունք: Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ հրատարակչություն, «21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդես, թիվ 3(43), 2012 թ.:

10. Серегина С.Г. Конституционный контроль в аспекте формы правления // Международная научно-практическая конференция.

11. Sweet A.S. "The politics of constitutional review in France and in Europe", New York, Oxford University Press, International Journal of Constitutional Law, Volume 5, Issue 1, 2007.

12. Зорькин В.Д. Принцип разделения властей в деятельности Конституционного Суда Российской Федерации // Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии "Конституционное правосудие", Вып. 2(40)-3(41)2008.

13. Мамут Л.С. Публичная власть, государство и разделение властей. Конституционный Суд как гарант разделения властей // Сборник докладов. – Москва: Институт права и публичной политики, 2004.

14. Sydykova S. "The Constitutional Court of Kyrgyzstan". Constitutional review and separation of powers. Sixth Conference of Asian Constitutional Court Judges, Singapore, "Konrad-Adenauer-Stiftung", 2009.

15. Курис Э. О Стабильности конституции, источниках права и мнимом всемогуществе конституционных судов. – Москва: Институт права и публичной политики, 2004.

16. Зорькин В.Д. Прецедентный характер решений Конституционного Суда Российской Федерации. - Москва, 2004.

17. Григорьев В.А. Текстуально-правовые конфликты в конституциях и проблемы их преоделения. - Москва, 2006.

18. Чиркин В.Е. Государствоведение: Учебник. – Москва: "Юрист", 1999.

19. Omejes J. Conference of constitutional control bodies of Central Asia, "The Role of the Constitutional Court in Safeguarding the Supremacy of the Constitution". Strasbourg, 28-29 October 2015.

20. Шульженко Ю. Конституционный контроль в России. - Москва, 1995.

РОЛЬ КОНСТИТУЦИОННОГО СУДА В ОБЕСПЕЧЕНИИ ПРИНЦИПА РАЗДЕЛЕНИЯ И БАЛАНСА ВЛАСТЕЙ

Аннотация

В статье анализируется, что характер и объем функций и полномочий, возложенных на Конституционный Суд поправками в Конституцию Республики Армения 2015 года, дают основания утверждать, что ключевая роль в обеспечении принципа разделения и баланса властей принадлежит именно Конституционному Суду. Это, в первую очередь, обусловлено тем, что посредством толкования Конституции преодолеваются возникшие в регулирующем отношения между государственными органами законодательстве пробелы, приводящие к нарушению Конституции. Это также обусловлено тем, что разрешение правовых (конституционных) споров, возникающих между органами государственной власти в связи с осуществлением ими своих конституционных полномочий, также относится к исключительной компетенции Конституционного Суда. Помимо ряда высказанных предложений, автор статьи также выразил мнение о том, что предусмотрение конституционных механизмов разрешения споров между органами государственной власти не следует рассматривать в контексте увеличения или уменьшения количества органов государственной власти.

Ключевые слова: Конституция РА, Конституционный Суд, конституционное правосудие, принцип разделения и баланса властей, законодательная база, правоприменительная практика, парламентское большинство, толкование Конституции.

ROLE OF THE CONSTITUTIONAL COURT IN ENSURING THE PRINCIPLE OF SEPARATION AND BALANCE OF POWERS

Annotation

The article analyzes how the nature and scope of the functions and powers assigned to the Constitutional Court by the 2015 amendments to the Constitution of the Republic of Armenia establish it as the key institution in ensuring the principle of separation and balance of powers. This role stems primarily from the Court's ability to address gaps in the legislative framework regulating relations between state bodies, which may lead to violations of the Constitution, through its interpretation. Additionally, the resolution of legal (constitutional) disputes arising between state authorities concerning the exercise of their constitutional

powers falls within the exclusive competence of the Constitutional Court. The author proposes several recommendations but disagrees with the notion that the provision of constitutional mechanisms for resolving disputes between state authorities should be viewed in the context of increasing or decreasing the number of state authorities.

Keywords: Constitution of the Republic of Armenia, Constitutional Court, constitutional justice, principle of separation and balance of powers, legislative framework, law enforcement practice, parliamentary majority, interpretation of the Constitution.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 01.09.2025 թ., տրվել է գրախոսության 10.09.2025 թ., ընդունվել է տպագրության 19.09.2025 թ.: